ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ և ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐՏԱՇԵՍ ԹԱՌԼԱՄԱՋՅԱՆԻ 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

Ի կատարումն 2019 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված աշխատանքային պայմանագրի (փորձագետ ընդգրկելու վերաբերյալ) 2.1.6-րդ կետի 2019-2021 թվականների ընկած ժամանակահատվածի համար ներկայացնում եմ իմ կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակվել է Պետական գույքի կառավարման հայեցակարգը, որը ընդունվել է ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1834-Լ որոշմամբ:

2. Պետական գույքի կառավարման հայեցակարգից բխող և ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրին համապատասխան մասնակցել եմ «Պետական գույքի օտարման և վարձակալության տրամադրման նպատակով էլեկտրոնային աճուրդի անցկացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Օտարման ենթակա պետական անշարժ գույքի առանց գնային առաջարկների վաճառքը կազմակերպելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 1073-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Պետական ոչ

առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի լրամշակմանը: Ընդ որում վերը նշված որոշման նախագծերից ընդունվել են ՀՀ կառավարության 2020թ-ի մարտի 26-ի N 395-Ն, 2020թ-ի ապրիլի 9-ի N 544-Ն և 2020 թվականի հունիսի 25-ի N 1079-Ն որոշումները:

3. Մասնակցել եմ ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 17-ի N 949-Ն որոշման համաձայն ստեղծված հանձնաժողովի աշխատանքներին, կազմել եմ հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, այդ արձանագրություններից բխող եզրակացությունների նախագծերը ու ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

4. Մասնակցել եմ պետական գույքի 2021-2023 թթ. եռամյա ծրագրի կազմման նախապատրաստական աշխատանքներին:

5. Հաշվետու ժամանակահատվածում պետական գույքի կառավարման հայեցակարգից բխող և ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրին համապատասխան մասնակցել եմ ՀՀ կառավարության կողմից ընդունված ՀՀ կառավարության 2020թ-ի հուլիսի 23-ի N 1236-Ն, ՀՀ կառավարության 2020թ-ի հուլիսի 18-ի N 1037-Ն և ՀՀ կառավարության 2020թ-ի հունիսի 4-ի N 914-Ն որոշումների մշակման աշխատանքներին:

6. Մասնակցել եմ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն շրջանառության մեջ դրված «Պետական սեփականություն հանդիսացող և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող գույքի օտարման (վաճառքի), օտարման (վաճառքի) մրցույթի և աճուրդի կազմակերպման ու անցկացման կարգերը՝ սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկումներ (մոնիթորինգ) անցկացնելու և գույքի օգտագործման բարելավման

վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարգը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 13-ի N 1130-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի և «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակմանը:

7. Մասնակցել եմ ՀՀ կառավարության կողմից ընդունված պետական գույքի կառավարման 2021-2023թթ ծրագրի կազմման աշխատանքներին: Նախագիծը կազմվել է իմ կողմից առաջարկվող մեթոդական ցուցումների հիման վրա:

8. Մասնակցել եմ պետական գույքի 2017-2020թթ. մասնավորեցման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակմանը, որոնք քննարկվում են ՀՀ ԱԺ-ում:

9. Մասնակցել եմ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Լիզինգի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման կարգը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի և ՀՀ ԱԺ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակման աշխատանքներին:

10. Մասնակցել եմ ՀՀ կառավարության կողմից ընդունված ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի N 202-Ն որոշման պահանջներին համապատասխան անշարժ գույքի մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագրի կազմման աշխատանքներին (մեթոդական մասով):

11. Մասնակցել եմ ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրի «Պետական գույքի արդյունավետ կառավարում» 6.7-րդ կետի մշակման աշխատանքներին:

12. Մասնակցել եմ ՀՀ կառավարության 2022 թվականի միջոցառումների ծրագրի նախագծի (պետական գույքին առնչվող) մշակման աշխատանքներին:

13. Մասնակցել եմ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների 2019, 2020թվականների և 2021 թվականի առաջին կիսամյակի արդյունքների ֆինանսատնտեսական ամփոփ վերլուծությունների իրականացմանը և 2019 և 2020 թվականների գործունեության գնահատմանը, ինչպես նաև ներկայացրել եմ համապատասխան առաջարկություններ, որոնք (վերլուծության արդյունքները և եզրակացությունները) ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:

14. Մասնակցել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի եռամսյակային և կիսամյակային գործունեությունը ներկայացնող հաշվետվությունների կազմման, ինչպես նաև պետական գույքի մասնավորեցման 2017-2020թթ-ի ծրագրի 2019 և 2020 թվականների ու պետական գույքի կառավարման 2018-2020թթ-ի ծրագրի 2019 և 2020 թվականների տարեկան հաշվետվությունների լրամշակման և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու աշխատանքներին:

15. Փորձագիտական առաջարկություններ և եզրակացություններ եմ ներկայացրել մի շարք ՀՀ օրենքների նախագծերի և այլ իրավական ակտերի նախագծերի ու մշակված ռազմավարական փաստաթղթերի վերաբերյալ:

16. Մասնակցել եմ պետական գույքային հարաբերությունները կանոնակարգող ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներից բխող պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի հրամանների մշակման աշխատանքներին:

17. Մասնակցել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի ներքին աուդիտի կազմակերպման աշխատանքներին:

18. Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի և նախագահի տեղակալների կողմից պետական գույքի կառավարման կանոնակարգմանն առնչվող հանձնարարականները, ինչպես նաև

մասնակցել եմ պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության գործառույթներին վերաբերող մեթոդական բնույթի ընթացիկ աշխատանքների կատարմանը:

ՓՈՐՁԱԳԵՏ՝ **ԱՐՏԱՇԵՍ ԹԱՌԼԱՄԱՋՅԱՆ**

08.10.2021թ.